


որ տեղից 1881 թուին՝ դանուել է 3 հատ բե-
ւեռագիր արձանագրութիւն և $1\frac{1}{2}$ արշին խո-
րութեան վրայ երեւցաւ մի նորօրինակ շի-
ւրակատունն է այսպէս.



նութիւն, մի քանի վառարաններով որ կա-
րելի էր կրակատուն համարել, ըստ որում
ուրիշ շինութեան նման չէ:

Մեարդը Արքեպիսկոպոս.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԽԵԴԻՐՆԵՐ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆՅ ՊԱՐՏԲԸ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ.

Սար ժամանակի երբ որ Եւրոպայում
առաջնակարգ խնդիրներից մէկն էր համա-
րուում ժողովրդեան սկզբնական կրթու-
թիւնը, մինչև որ առաջ եկաւ պարտաւորե-
ցուցիչ ուսումը: Եւրոպան ծածկուեցաւ խիտ
և ընդարձակասփիւռ ուսումնարանական ցան-
ցով այնպէս որ եթէ առաջ հազարներով էր
համարուում այն մանուկների թիւը, որոնք
անգրագէտ փողոցներումն թափառում էին, այ-
ժմ զոցա թիւը հազիւ տասնեակների է հաս-
նում: Այս գործում նախաձեռնութիւնը ա-

ւելի կառավարութիւնների կողմից էր լինում
քան համայնքի: Բայց ժամանակը և փորձը
ցոյց տուեց, որ այդքանը բաւական չէ: Բայցի
այն հանգամանքից, որ մանուկներից շատերը
դեռ դարձեալ անգրագէտ մնալով են մեծա-
նում, նոյն իսկ կրթութիւն ստացածներն
ևս այն աստիճան փոքր ծաւալով ուսում են
առնում, որ յետոյ կեանքի մէջ նոր է զգա-
ցուում ստացածի թերին և պակասորդը:

Այս տեղից առաջացաւ լրացուցիչ կրթ-
թութեան խնդիրը, որ այժմ Եւրոպայում ամե-
նակարևոր խնդիրներից մէկն է դարձել: Կիրակ-
նօրեայ ուսում, դիւրամատչելի դասախօսու-
թիւնների ժողովրդական ընթերցանութեան
զրբեր, պարբերական հրատարակութիւնների
ամեն տեսակ նպաստող թանգարանների, գրադա-
րանների, ընթերցարանների, ակումբների՝ արուես-
տավարժ, ծարտարութեանց ուսումնարանների,
ընկերութիւնների, բարեգործական հաստատու-
թիւնների, իսկ նախ և առաջ կոպէկներով ժողո-
ված միլիոններ և այլն—սոքա ամէնքը միեւնոյն
լրացուցիչ ուսման նպաստող զանապաւն անուն-
ներով օժանդակութիւններ են: Այս բազմազա-
նութիւնը ինքնին ցոյց է տալիս թէ կարի-
քը որքան ընդարձակուել է, որքան բարդ
պահանջներ է առաջ բերում: Եւ յիշուի,
իւրաքանչիւր տեղ, իւրաքանչիւր համայնք,
իւրաքանչիւր ազգաբնակչութիւն իւր յատուկ
հանգամանքներն ունի, որոնք նման չեն միւսնե-
րին, հետեւապէս առանձին խնամք և մատակա-
րութիւն են պահանջում կառավարութիւնը
ամէն տեղ չի կարող հասնել, իւրաքանչիւրի
յատուկ պահանջը չի կարող գուշակել և
լրացնել, առանց ծանրանալու միւսների վե-
րայ, քանի որ ընդհանուրի հարկատուութիւ-
նից պիտի օգտուի և աւելի միակերպ ծրա-
դրով գործ է: Այս տեղից առաջացաւ համայն-
քի ազատ նախաձեռնութիւնը իւր պէտքերը
ըստ պահանջի և առաւելապէս իւր միջոցնե-
րով հոգալու համար: Այս ուղղութիւնը այն
աստիճան որոշուել է, որ մինչդեռ առաջ
կառավարութիւնները զլանում էին լուսաւո-
րութեան փափուկ խնդիրը համայնքի ձեռ-
քում թողնել, այժմ իրանք քաջալերում են
նորան յարատեւիլ այդ ուղղութեամբ, որպէս
զի իրօք յաջողուի մեծ գործը:

Այս տեսակէ որից խիստ նշանաւոր և խրատական է Փրանսիայի օրինակը: որ առանց այն էլ լուսաւորութեան համար մեծամեծ գործեր է կատարել: Այնտեղ մեծ շարժում է սկսուել յօգուտ ազգային անդրդրաւորացական լուսաւորութեան: Անցեալ տարի օգոստոսին հաւրում կայացաւ «Ազատ ժողով ընկերութեան» սրտեք ձգտում են ժողովրդեղեան մէջ լուսաւորութիւն տարածել: Ծերկայ էին զանազան ընկերութեանց՝ ժողովրդական գրադարանների և մանկավարժական մամուլի մօտ 400 պատգամաւորներ:

Այս ժողովի առաջին նշանաւոր հանգամանքն այն էր, որ գրան այցելութեան եկաւ Փրանսիական ժողովրդապետութեան նախագահն ինքը: Ֆելիքս Փօրը ժողովի նիստին ներկայացաւ անակնկալ կերպով և առանց որ և է հանդիսական ձեւերի: Պետութեան զուարթ կամեցաւ անձամբ արտայայտել իւր համակրութիւնը ժողովին և ի դիմաց Փրանսիայի բարեմաղթութիւններ յայտնել և յաջողութիւն ցանկալ մասնաւոր նախաձեռնութեան բարի սկզբնաւորութեանց: Շախագահի գալը և նորա բարեմաղթութիւնը անվերջ ցնծութեանց պատճառ դարձաւ:

Ծրկրորդ զգալի միջադէպն էր ազգային լուսաւորութեան նախարար Պուանկարէի արտասանած փակման փառաւոր ճառը: Պուանկարէն ժողովին եկել էր ինչպէս ինքը յայտնեց՝ ոչ իբրեւ նախարար և տէրութեան պաշտօնեայ, այլ որպէս մասնաւոր անձն և այն ժողովի համահաւասար անդամ: «որ ազատ նախաձեռնութեամբ է ծագել»:

Այս ժողովը, ասաց նա՝ մի հաւաքարան է այն բոլոր լայնածաւալ ընկերութեանց, որոնք իրանց ոյժերը ազատ կամօք նուիրել են ազգային լուսաւորութեան: Նորա քննութեան ենթակայ են այնպիսի խնդիրներ, որոնք անշուշտ խիստ կարեւոր են բոլոր ժամանակների և ազգերի համար, իսկ Փրանսիայի համար այժմ տագնապիչ և կենսական պահանջի նշանակութիւն են ստացել:

Ժողովրդեան բարոյական և մտաւոր զարգացման խնդիրը երբեք այնքան եռանդեամբ չէ զրադեցրել մեր հասարակաց կարծիքը, ինչքան այսօր: Մանկավարժական, քա-

ղաքական և բանասիրական ամսագիրները, ընտանեաց հայրերը, դպրոցական ուսուցիչները, հասարակաց վարչութեան ներկայացուցիչները, ամէնքը միաբերան յայտարարում են, թէ մեր հասարակաց կրթական վիճակը կարօտ է՝ եթէ ոչ թերութիւններից ազատուելու գէթ իւր պակասորդը լրացնելու: Փրանսիական հասարակութիւնը իրաւունք չունի հանգստանալու դափնիների վերայ՝ զոհ մնալու արդէն հասած արդիւնքներից: Շա պարտաւոր է աւելի ևս ջանքով հետամուտ լինել կարեւոր բարեկարգութիւններ իրագործելու համար...

Փրանսիայի այժմեան լուսաւորութեան խնդիրները միայն այն չեն, որ օգնութիւն հասուցանուի եղած դպրոցին, պահպանուի և ընդարձակուի նորա գործունէութիւնը, շնա աւելի լայն և բարդ է, այսինքն՝ այսուհետեւ հարկաւոր է դպրոցի գործը լրացնել և շարունակել, հարկաւոր է մանուկներին և պատանիներին շրջապատել որչափ կարելի է բազմաթիւ կրթական ոյժերով և հաստատութիւններով: Ռեքեմ պարտաւորիչ կրթութիւնը վերջանալուց յետոյ՝ հարկաւոր է նոյն կրթութիւնը շարունակ պահել և աւելի ընդարձակել:

«Այս մեծ առաքելութիւնը իրագործելու համար՝ որին պէտք է դիմէ Փրանսիան՝ Ո՛վ պէտք է յանձն առնէ ծանր պարտականութիւնը՝ կատարել նաեւ պատանիների, երիտասարդ շինականների և մշակների համար այն ինչ որ մանուկների համար արդէն կատարուել է այնքան զոհաբերութեանց և ջանքերի գնով: Այս դէպքում, ինչպէս միշտ լսում ենք բազմաթիւ և հակասական խորհուրդներ և խրատներ: «Պարտքը բաց է ի բաց տէրութեանն է» — ասում են ոմանք: «Այնպիսի խնդիրներում, որոնք ծագել և լուծուել կարող են միմիայն ազատութեան շնորհիւ — ասում են միւսները — հարկաւոր է թողնել, որ գործէ մասնաւոր նախաձեռնութիւնը, և պէտք է զերծ մնալ իշխանութեան միջամտութիւնից և ազդեցութիւնից»:

Թո՛ղ տուեցէք, որ ես էլ իմ միտքս յայտնեմ ամենայն պարզութեամբ և անկեղծութեամբ այդ խնդրի վերաբերութեամբ, որ այնքան լուրջ և ջերմ վիճաբանութիւններ յարոյց ժողովիս նիստերում:

«Դ՞նչ գաղափարներով էր տառջնորդուում Ֆրանսիական կառավարութիւնը, երբ որ յանձն առաւ ընդհանրութեան մէջ սկըզբնական կրթութիւն տարածելու հոգսը: Նա կարծում էր, թէ հասարակութիւնը միայն նորանով չի բարեկարգուի, եթէ նորա մարմնական ազատութիւնը ապահովուի լաւ կազմակերպուած ստիկանութեամբ, այլ և նորանով, որ իւր բոլոր անդամներին հնարաւորութիւն տրուի իւրեանց բարոյական և մտաւոր յատկութիւնները արդիւնաւորել, սովորեցնել նոցա հասկանալ իւրեանց իրաւունքները և քաղաքացիական պարտականութիւնները և հաւասարապէս օգտուիլ հասարակաց կարգի առաւելութիւններին: Յանուն այս գաղափարի յանուն նորա մէջ մարմնացած արգարութեան և միարանութեան սկզբանց, նա կարեւոր դասեց, իրրեւ կենաց ամենաեական միջոց, տալ իւր բոլոր քաղաքացիների զաւակներին կրթութեան մի որոշ փոքրագոյն բաժին: Բացի սորանից, նա շինական և մշակ դասակարգի առաջ լայն բաց արաւ միջին և բարձրագոյն կրթութեան դռները: Նա չը խնայեց ոչ ջանք և ոչ ծախք իւր յանձն առած պարտականութիւնը ճշդութեամբ կատարելու: Բայց նա չի կարող և չը պէտք է լայնացնէ նոյնը անորոշ չափով: Նա հնարաւորութիւն չունի և պարտաւոր չէ իւր մէջ կենդորոնացնել ազգի բոլոր կենդանի ոյժերը, նա չի կարող պահանջել, որ հասարակութեան և ընկերութեանց, նահանգի և գաւառի մասնաւոր անհատները կառավարութեան թողնեն այն պարտականութեանց կատարումը, ինչին որ նոքա կարող են իրանց սեփական ոյժերով լրումն տալ: Եթէ այսպէս կառավարութիւնը հրաժարուում է կենդորոնացնել նոր կազմուող կրթական հաստատութիւնները, սորա համար լուրջ հիմունքներ կան: Նախ և առաջ ես ոչ ոք չեմ զարմացնիլ եթէ ասեմ, թէ մեր եկեմտի վիճակը չի ներում նորանոր ընդարձակ ձեռնարկութիւններ սկսելու: Մենք ոչ միայն պէտք է զսպնէք հասարակաց ծախքեր անելու շրջալ մոլութիւնը, այլ և երբեմն չափաւորենք նոյն իսկ ամենաբնական ցանկութիւնները: Ապա թէ, ոչ մենք ստիպուած կը լինինք երկու ծայրայեղութեանց մէկն ընտրել կամ

Ֆրանսիայի վարկը նսեմացնել կամ հարկատուների վերայ ծանրանալ ուժից ի վեր հարկեր վճարել տալով: Սակայն միայն այս պատճառը արգելք չի դառնում կենդորոնական վարչութեան մէջ հաւաքելու ազգի բոլոր կրթիչ զօրութիւնները, որ ինչքան և ծանր պատճառ է, բայց և այնպէս աւելի ժամանակաւոր բնաւորութիւն ունի: Այդ զօրութեանց այսպիսի իշխանական նուաժումը ֆեոսական է ինքն ըստ ինքեան: Այսպիսի ճնշման տակ հասարակութեան կենդանի զօրութիւնները փոխանակ բազմապատկելու և բարգաւաճելու, եթէ տէրութեան առաջնորդութեան և խնամակալութեան ներքոյ պատսպարուին, վտանգի են ենթարկուում թուլանալու և սպառելու, որովհետեւ կը սառչեն միակերպ կազմութեան մէջ, ճէրութեան կազմած ծրագիրներն ու աւանդման եղանակները, որքան էլ լայնածաւալ ընդհանրական և առաձգական լինին, ոչ բեղմնաւոր բազմազանութիւն կունենան, և ոչ այն յանպատրաստի ստեղծագործութեան անհուն ճոխութիւնը, որ յատուկ է միայն կենդանի ուժերով և ինքնարերութեամբ ծագող գործին: Դսկ ամենայն տեսակ կրթիչ հաստատութեանց յաջողութեան միակ գաղտնիքը, անշուշտ, այն համարուելու է, որ ծրագիրներն ու աւանդման եղանակները կարողանան համակերպուել կեանքի և ըսպէին յարաշարժ կարծիքներին, տեղն ու տեղը երեւցող ընդունակութիւններին ընտրուած պարապմունքներին, տեղական պահանջներին և բարքերին, անհատների անձնական հակումներին և այլն, և այլն, և այլն:

Եթէ հարկաւոր է, թող կառավարութիւնը քաջախիտ նախաձեռնութիւնը խրախուսէ հասարակութիւններին ու մասնաւոր անձինքներին, վարձատրէ դասընթաց և դասախօսութիւն կազմողներին, նիւթապէս նըպաստէ համայնքներին և, վերջապէս, ուղղակի և անմիջապէս գործէ այնտեղ, ուր որ հնար չի լինում կեանք տալ յօժարակամ գործունէութեանը: Բայց մի պահանջէք, որ նա բացառապէս միայն իւր պատասխանատուութեամբ ծածկէ ամբողջ Ֆրանսիական երկիրը նոր դպրոցական—վարչական ցանցով և որ իւր հաշուով կանգնեցնէ երկրորդ յար-

կը՝ ազգային լուսաւորութեան այն անգին և պատուական շէնքի վերայ, որ նա արդէն ստեղծել է։

Համարձակ ծանուցանում եմ թէ անդրդպրոցական կրթութեան դործում տերութեան մասնակցութիւնը սահմանափակ պիտի լինի։ Բայց և այս կուեւրացնեմ որ այդպիսի սահմանափակ օգնութիւնը նա պարտաւոր է տալ անմիջապէս։ Այս համոզմամբ ես արդէն դիմեցի ելեմտական յանձնախմբին խնդրելով որ վարկ սահմանուի ինպաստ անդրդպրոցական կրթութեան, և արդէն նորա յօժարութիւնը ստացայ այդ մասին։

Ս. Մ.

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

ՀԱՐԱՆԻ ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՑ

Բ.

ՔԵՆՏՐՈՆՑ

Սաննչ կրթական էր, քնն զարմայ որ թնդերի վառել իջել է. մենք ապաս հաց է թխմ, պիջի անաս գրտնգմ է, հարս ապաս գունդ է տալմ ու հացերը փում, Մամն շանդները լուացէ, թնդեր շորս կողմը շարել ու թնդրէն կրակ հանէ եղջարիչով եղ է հալմ, Աղջկներու գաղարումն է կըսես թէ կտրել էր՝ պալաղօտի կերած ձկի պէս պահուցուայ շորերն ու կարմիր ողիցները հագել ձոթ—վոթ էնելով թէզ թէզ դուս էին ելնմ նես գալմ։

— Մամի ջան, դէ թէզ երէք, հմի Մկոյնց չէլիկը կերթայ, ըսաւ Հուշանը։

— Ահան ես պրծայ՝ եղն հալաւ, Մագթաղ ջան, ոգի հացը դրէք, գղնները սարքէք, ես էլ էս է խաշիլը լցնմ եմ, ըսաւ մամն ու սկսաւ խաշիլը գուլթի պղնձէն լցնել շանդները։

— Մագթաղը սալէն գլօխ հաց դարսեց, գղններն էլ գղնոցէն բերաւ դրստեց, սարքեց ու առաւ գնաց ողէն, Մնացած աղջկներն էլ մամիս լցած շանդներէն ամեն մէկը մի մի հատ խաշիլի ես թանապրի շանաղ գրկըկորան ու գնացին։

— Ջարթար ջան, հացը թխիբ պրծար, մեր էս ճամփու բաղաջներն էլ դարկ կողը. հմի ողից հացը յեա կուգայ, մենք էլ հաց ուտենք ու ճամփայ ընկնիք, ըսաւ մամն ու օղլուշաղի հմար էլ հացի թագարուկ տեսաւ։

Նոր որ սուրփէն դրին, մամն ու մենք հարսները մէկ նստան, աղջկներն ու պզտի հարսներն

էլ մէկ, հմա մերս հեռու կայնաւ, չմօտեցաւ սուրփին։

— Ուշ, հարս, դու ծում ու պաս պտի էրթաս, հմ, սուրփին չես մօտենմ։ Թաժա սուրբը մուրազդ տայ, Դէ, որ ըզման է, Յակօյիս շորերը հագցրու, հաց տուր ուտէ. էն էլ խօ ծում գալու էէ, մատղաշ է, չի դիմանայ։

Նոր մերս մօտեցաւ ընձի, վերնաշապիկս ու չարող գուլպէս հագցրաւ, ինչարի ընդոնք էլ կերան, պրծան, սարքւորանք ու ճամփայ ընկանք դիպա Թաժա սուրբը, Հլա գեղէն դուս չէինք ելել, որ մեզի հետ խառնուան Մկոյնց, Մլքայնց ու Պիպինեց չէլիկը, Խառնուելուն պէս աղջկները մեզէն ջոկնուան ու ձէ—ձէնի տուած խաղ ըսելով, արտերու միջէն սինձ քաղելով յառաջ գնացին։

— Ուշ, կրակ ուտէք, աղջկներ, հլա ինչ մեզէն թէզմ ջոկնուան, ըսաւ Մլքայնց Մարթան։

— Ըրա, չիտես որ իծուն է՞ծը լաւ է քանց մի սիւրի օշխար, վրայ բերաւ Պիպինեց Գարանը. Ի՛հ հմի, ջոկնուան, ջոկնուան, խօ ջրերը չկայնան, մենք էլ իրար հետ խօրաթայ էնելով եաւաշ եաւաշ կերթանք։

— Հարսներ, աղջկներուն թամբայ էնէիք՝ սինձ չքաղեն, մեղք է՝ ուխտ էրթլուս գետնէն բան չեն վերցնէ, սուրբը մուրազը չի տայ. քաղմ են, էն կողմէն յետ գալուս թող քաղեն, խրատ տուաւ Մլքայնց Նշխուն անան։

— Քա քաւորկին Մարօ, աջար էն կնիկը սաղ է, հարցրաւ Գարանը մամիս։

— Ո՞ր կնիկը։

— Էն, որ էրազ էր եկել Թաժա սուրբը։

— Քա աղչի, խօ էրազ չէ եկել, վրայ պրծաւ Մլքայնց Հոռոմը, զօր ցօրեկով տեսել, աչքին երևացել է, ինչ որ չլմանցնենք՝ ես ու դու իրար տեսնմ ենք։

— Ուհ էրանէկ էդ կնկան, ինչքան արդար է, որ սրբերը օր ցօրեկով աչքին երևաւ են, Թէ սաղ է, էրնէկ իրան, թէ մեռած է, զաթի հոգին լսի փայ է։

— Քա ջան էգիկ ի՞նչ էր եղել։

— Ինքը չիտեմ, եաղուրու թէ ասորու ժողովք էնող աղքատ կնիկ է, սկսաւ գաւառագիտուն Նախշուն անան, Էն վերի գեղանէն մէ պիջի աղջկամ ձեռ բռնած գալուս, էդ ձորերը թիփին կառնի իրան...

— Քա ձմեռ վաղթ է եղել։

— Ըրա ձմեռ չէր, որ եկան ըսին թէ Թաժա սուրբ է ելել, Արգդ թիփին որ սկսէ կը կատղած փչել ու ճամփէն մոլորցնել, էդ խեղճ կնիկ արմատը ընկնի կը ծնկներու վրայ, առ Աստուած կաղաղակէ, կուլայ ու սրբերուն հաւարի կկանչէ, Կեմ էլ կտեսնի մէ զո ձիաւորմ ալ բինիլը վրէն, միջաղը ձեռը, ձին խաղցնելով գալմ է։